

այժմ ի ձեռն յողնաջան աշխատասիրութեան Սարգսի Արքեպիսկոպոսի կոստանդնուպոլսեցւոյ ի լոյս ածեցաւ յարմարագրութեամբ եւ տպագրութեամբ... Յորդորմամբ եւ բոլոր իսկ արդեամբ Տեառն Իսահակայ իմաստնախոհ վարդապետի եւ հռչակաւոր Արքեպիսկոպոսի, մականուամբ Ան-դէն կոչեցելոյ: Ի Հայրապետութեան Հայոց ի լուսանկարն սուրբ Էջմիածին Տեառն Ղազարու կաթողիկոսի ջահեցւոյ: Յամի ներմարմնութեան Տեառն մերոյ 1750: Եւ ի թուականութեան Հայոց ՌՃՂԹ: Յամեանն Յուլիսի: Ի վենետիկ, ի տպ. Անտոնի Պօռթօլի Հրամանաւ մեծաւորաց, (սեւ-կարմիր տիպ): (Մատեն. էջ 726:)

Մեծութիւն 19 × 12 սմ. երկիջեան. էջք՝ I—XX, 1—1093. 1 պատկ.:

Էջ III. «Առաջարանութիւն... կարես ուսանիլ... զբարեմտութիւն հարազատի իմոյ ի Քրիստոս, Տեառն Իսահակայ Արքեպիսկոպոսի, որ ի ձեռն յորդորական եւ յողնաթիւ ծախուց իւրոց՝ գլխովին պատճառ եղեւ տպագրութեան սորին. վասն լուսաւորութեան Լուսաւորչածին ազգիս Հայոց, եւ վասն օժանդակ գտանելոյ Քարոզիչ եղբարց, յորմէ ոչ օգտին զսակաւս, նաեւ վասն այլոյ իմն բարւոյ վախճանի, զորմէ ընթերցցիս ի վերջին երեսն գրգոյս: Հուսկ յետոյ՝ կարես ճանաչել եւ եւս զճանրագոյն երկունս աշխատասիրութեան իմոյ ի յարմարագրելն զտորդ շարագրութիւնս եւ ի բազում ուրեք զսխալական բառս, եւ զբանս ի հեղգութենէ թարգմանչին ի յանհմտութենէ գրագրին պատճառեցեալս, որք ետուն մեզ զաշխատութիւնս ոչ սակաւս: Քանզի ունելով մեր զմի միայն գաղափար ձեռագիր, եւ այն գրեթէ լցեալ էր յամենայն տողս իւր պէսպէս սխալանօք. վասն որոյ հարկ եղեւ մեզ գտանել աստ զբուն օրինակն լատինական՝ առ ի համեմատել զմերն առ նա... Եւ զսխալանաց տպագրու-